ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» Սեպտեմբերի 2022թ. N ՄՈ/543-2022

ք. Արմավիր

«ԱՐԳԱՎԱՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Խաչատուր Դանիելյանի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արգավանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խաչատուր Դանիելյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2022 թվականի հոկտեմբերի 4-ից 14-ը ներառյալ՝ 9 աշխատանքային օր տևողությամբ:
2. Խաչատուր Դանիելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արգավանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արգավանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Գոհար Աղաջանյանին:
3. 2022 թվականի հոկտեմբերի 4-ից 14-ը ներառյալ «Արգավանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Գոհար Աղաջանյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Խաչատուր Դանիելյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի հոկտեմբերի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 27.09.2022 14:31:52 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505